

**« Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

« Գեղարքունիքի մարզի դպրոցականների՝ 2018-2019 ուստարվա օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը կազմակերպվել և անցկացվել են՝ ըստ նախատեսված ժամանակացույցերի: Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 122 դպրոցների 9113 աշակերտ 2018թ. դեկտեմբեր ամսից մինչև 2019 թվականի փետրվար ամիսը մասնակցել է ներդպրոցական փուլին, որից յոթ առարկայի գծով՝ առցանց /օնլայն եղանակով/, այդ թվում՝ Գավառի տարածաշրջանից՝ 1454 աշակերտ, Մարտունու տարածաշրջանից՝ 1029 աշակերտ, Սևանի տարածաշրջանից՝ 610 աշակերտ, Վարդենիսի տարածաշրջանից՝ 774 աշակերտ և Ճամբարակի տարածաշրջանից՝ 439 աշակերտ:

**Ներդպրոցական փուլի** արդյունքներով 9 առարկայից տարածքային փուլին մասնակցության է երաշխավորվել 1934 աշակերտ, այդ թվում՝ Գավառի տարածքից 640 մասնակից, Մարտունու տարածքից՝ 567 մասնակից, Սևանի տարածքից՝ 144 մասնակից, Վարդենիսի տարածքից՝ 303 մասնակից, Ճամբարակի տարածքից՝ 280 մասնակից: 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգի» համաձայն՝ «Մաթեմատիկա», «Աստղագիտություն», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաներից օլիմպիադաներն առցանց եղանակով կազմակերպվել է մարզի 113 դպրոց, որոնցից առաջին փուլի մասնակցության հայտ է ներկայացրել 4306 աշակերտ, մասնավորապես, մաթեմատիկայից՝ 2084, քիմիայից՝ 459, աստղագիտությունից՝ 9, կենսաբանությունից՝ 614, ինֆորմատիկայից՝ 67, ֆիզիկայից՝ 494, աշխարհագրությունից՝ 579:

Մարզային փուլին մասնակցելու երաշխավորվել է 578 աշակերտ: Սակավաթիվ հայտ է ներկայացվել «Ֆրանսերեն» և «Աստղագիտություն» առարկաներից:

**Տարածքային փուլն անցկացվել է** « Գեղարքունիքի մարզպետի՝ 2019թ. հունվարի 24-ի N 22-Ա որոշման համաձայն՝ ս/թ հունվարի 29-ից մինչև փետրվարի 12-ը ընկած ժամանակահատվածում, նախկին վարչական կենտրոններում: Այս փուլին երաշխավորված 1934 աշակերտից փաստացի մասնակցել է 1703-ը (կամ երաշխավորվածների 88%-ը) այդ թվում՝ Գավառից՝ 536-ը, Սևանից՝ 144-ը, Մարտունուց՝ 440-ը, Վարդենիսից՝ 303-ը, Ճամբարակից՝ 280-ը:

Տարածքային փուլին մասնակցած 1703 աշակերտից մարզային փուլին երաշխավորվել և մասնակցել է 578-ը, այդ թվում Գավառից՝ 194-ը, Մարտունուց՝ 146-ը, Սևանից՝ 111-ը, Վարդենիսից՝ 65-ը և Ճամբարակից՝ 62-ը:

**Մարզային փուլը կազմակերպվել և անցկացվել է** « Գեղարքունիքի մարզպետի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի N 139-Ա որոշման պահանջների կատարմամբ:

Մարզային փուլին 16 առարկայից մասնակցեց 463 աշակերտ, այդ թվում՝ Գավառից՝ 155-ը, Մարտունուց՝ 114-ը, Սևանից՝ 90-ը, Վարդենիսից՝ 45-ը, Ճամբարակից՝ 59-ը:

Մարզային փուլի՝ 463 մասնակցից հանրապետական փուլին երաշխավորվեց մասնակցել 83 աշակերտ: Ըստ տարածքների՝ հանրապետական փուլի մասնակիցների քանակն հետևյալն է.

Տարածքի անվանում	5-րդ դաս.	6-րդ դաս.	7-րդ դաս.	8-րդ դաս.	9-րդ դաս.	10-րդ դաս.	11-րդ դաս.	12-րդ դաս.	Ընդամենը
Գավառ	0	0	0	1	1	3	4	3	12
Մարտունի	0	0	1	1	2	5	4	8	21
Սևան	0	0	2	0	8	7	2	10	29
Վարդենիս	1	0	0	0	4	0	1	1	7
Ճամբարակ	0	0	0	0	2	3	5	4	14
Ընդամենը	1	0	3	2	17	18	16	26	83

**Ամփոփելով 2018-2019 ուսումնական տարվա « Գեղարքունիքի մարզպետի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի N 139-Ա որոշման պահանջների կատարմամբ» դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մարզի աշակերտների արդյունքները՝ պարզվեց հետևյալը՝**

❖ **հանրապետական փուլին** երաշխավորված 83 աշակերտից մասնակցել է՝ 73-ը, չի մասնակցել՝ 10-ը:

❖ մասնակցած աշակերտներից 14-ը ստացել է դիպլոմ, 8-ը՝ գովասանագիր, իսկ <<ՆԶՊ>> առարկայից մարզի թիմը՝ հանրապետությունում զբաղեցրել է 8-րդ տեղը և մրցաձևերի անհատական արդյունքով մեկ աշակերտ <<Նռնակի նետում>> մարզաձևում՝ զբաղեցրել է 2-րդ տեղը:

### **1-ին կարգի դիպլոմ են շահել՝**

➤ Լճաշենի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Նարե Խանդանյանը՝** <<Հայ գրականություն>> առարկայից:

➤ Լճաշենի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Նարե Խանդանյանը՝** <<ՀԵՊ>> առարկայից.

### **2-րդ կարգի դիպլոմ են շահել՝**

➤ Ճամբարակի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Միլենա Ճաղարյան՝** «Հայոց լեզու» առարկայից.

➤ Ճամբարակի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Միլենա Դալլաքյան՝** <<Հայ գրականություն>> առարկայից.

➤ Մադինայի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Արման Վերդոյանը՝** <<Պատմություն >> առարկայից.

➤ Լիճքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Արսեն Պողոսյան՝** <<Գերմաներեն>> առարկայից

➤ Ճամբարակի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Անահիտ Արամյանը՝** <<Գերմաներեն>> առարկայից.

➤ Մարտունու N2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Գոռ Ֆարմանյանը՝** <<Աշխարհագրություն>> առարկայից.

### **3-րդ կարգի դիպլոմ են շահել՝**

➤ Վարդենիսի N 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Մանե Խաչատրյանը՝** «Հայոց լեզու» առարկայից.

➤ Սևանի N 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Համլետ Խաչատրյանը՝** <<Պատմություն>> առարկայից.

➤ Սևանի N4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Մարիանա Մխիթարյանը՝** <<ՀԵՊ>> առարկայից.

➤ Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Գոհար Սուլյանը՝** <<ՀԵՊ>> առարկայից.

➤ Ճամբարակի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի **Անուշ Այունցը՝** <<Գերմաներեն>> առարկայից.

➤ Սևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Ռոբերտ Անտոնյանը՝** <<Կենսաբանություն>> առարկայից.

### **Գովասանագրեր են ստացել՝**

➤ Սևանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Շողեր Գալստյանը՝** <<Հայ գրականություն>> առարկայից.

➤ Մարտունու ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Էմիլիա Ժամհարյանը՝** <<Պատմություն >> առարկայից.

➤ Գանձակի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Զուլյա Հարությունյանը՝** <<Պատմություն >> առարկայից.

➤ Սևանի N 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Համլետ Խաչատրյանը՝** <<ՀԵՊ>> առարկայից.

➤ Սևանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Շուշան Ղալթախյանը՝** <<ՀԵՊ>> առարկայից.

➤ Սևանի N 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Համլետ Խաչատրյանը՝** «Բուսաց լեզու» առարկայից.

➤ Ճամբարակի N1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի **Նազելի Աբրահամյանը՝** <<Գերմաներեն>> առարկայից.

➤ Սևանի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի **Թամարա Ասատրյանը՝** <<Գերմաներեն>> առարկայից: